**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հունվարի 27-ի N 2 արձնագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԲՄԱՇՁԲ-25/04**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԲՄԱՇՁԲ-25/04 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «825Վ մալուխների փոխարինում Մետրոպոլիտենի Ք-2 ենթակայանից մինչև գնացքների հավաքակայան 2*1400մ,ընդամենը 2800մ, մալուխների տիպը ՊՎՊԲ - 1*400մմ2 պղնձյա մեկ ջիղով մալուխ կարված պոլիէթիլենային մեկուսացումով, զրահապատ, ջիղը բազմալար լարումը 3 կՎ, կամ համարժեք տիպի և որակի արտադրության:

Աշխատանք կատարողը պետք է.

- ունենա Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) «Շինարարության իրականացում» առնվազն 2-րդ դասի լիցենզիա՝ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման համակարգեր) ներդիրով,
- ունենա թունելներում բարձր լարման առկայությամբ, սահմանափակ տարածքային և խոնավ պայմաններում մոնտաժային աշխատանքներ կատարելու փորձ,
- աշխատանքները պետք է կատարվեն գիշերային ժամերին,
- Աշխատանքը պետք է ընդունվի փուլ առ փուլ ըստ հավելված 1.1-ի:

Յուրաքանչյուր ամսվա համար կողմերի միջև փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ պետք է կազմվի կատարողական ակտ, ինչի հիման վրա կատարողը պետք է ներկայացնի վճարման հաշիվ-ապրանքագիր»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ